բիւրքերից՝ որը իւր ձեռքով փակեց (գլխարկ տաճկահայ հոգեւորականաց) դրել է գլխին. Կրօնական ժողովոյ որոշման համաձայն Կեսարիոյ Ս. Կարապետ վանք պիտի ուղարկուի վեղարի օրհնութիւնն ըստանալու Սանտալճեան Ստեփանոս եպիսկոպոսից (քանզի վիճակին Առաջնորդը վարդապետ է) և ուսանելու հայ Եկեղեցւոյ ծէսերն և խորհրդաւոր արարողութիւններն, մինչև որ որ և իցէ պաշտօնի կոչուի.

## ՊԱՐՍԿԱՀԱՅՔ.

Նոր Ջուղայից ստացած տեղեկութիւններից իմանում ենք, որ մարտի սկիզբներում Թեմական Առաջնորդ Գեր. Եսայի Արքեպիսկոպոսը մեկնել է դէպի Հնդկաստան, յայցելութիւն իւր հօտին. Առաջնորդական պաշտօնը փոխանորդաբար վարում է Բարձր. Սահակ ծ. վարդապետ Այվազեան, որ ներկայումս Թեհրան եկել է ինչ ինչ գործոց կարգադրութեան համար:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ.

1. ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ԱՍՊԱՐԷԶԸ . Կ. Վալոդ . . 77.
2. ԵՐԵՄԻԱ ՄԱՐԳԱՐԷ . . . . . 79.
3. ՅԱՒԵԼՈՒԱԾ «ԱՐԱՐԱՏԻ» . . . . 86.
4. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ . . Ն. Ք. . 82.

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

5. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ. ԵՐԳ. ԱՂՕԹՔՆԵՐ Ս. Հ. . 83.
6. ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՏԱՂԱՉ. ՄԱՍԻՆ. Յ. Յ. . 84.
7. ՀԻՆ ՀԱՅ ԵՐԳԻՉՆԵՐ . . Ն. Քարամեանց 90.
8. ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ . Մ. Բ. . . 92.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ.

9. ՆՈՐ ՆԱԽԻՋ. ՈՒՍՈՒՄՆ. ԳՈՐԾԸ Ն. Ճ. . 96.
10. ԱՐԾՈՒԻ ԲՈՅՆԸ . . . . . Զ. Յ. . . 99.
11. ՄԱՆՐԱԼՈՒՐՔ. . . . . . . . . . 100.

ԱԶԳԱՅԻՆ.

12. ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ . . 102.
13 ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ . . 103
 1. ՄԱՅՐ ԱԹՈՌ. . . . . . .
 2. ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ԵՒ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ . . . .
 3. ՔԱՂՈՒԱԾՔ ՎԵՀ. Հ. ԿՈՆԴԱԿՆԵՐԻՑ . .
 4. ՌՈՒՍԱՀԱՅՔ . . . . . . . . . .
 4. ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄ. . . . . . .
 5. ՄԱՀԱՑՈՒՑԱԿ . . . . . .
 6. ՏԱՃԿԱՀԱՅՔ. . . . . . .
 7. ՊԱՐՍԿԱՀԱՅՔ . . . . . .
 8. ՆԱՄԱԿԱՏՈՒՓ . . . . . . . . . .
 9. ՅԱՒԵԼՈՒԱԾ «ԱՐԱՐԱՏԻ» ՅԻՇԱՏԱԿ ԵՐԵ-ՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ Ի ԳՐՈՑՆ ԲԱՐՈՒՔ .

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. . . . . .

## ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

ԹԻՖԼԻԶ. Գ. Ա.—Ս. Էջմիածնի ձեռագիրների ցուցակը տպագրութեան համար պատրաստ լինելու մասին խմբագրութիւնս ոչինչ չը գիտէ. «Հանդէս Ամսօրեայ»-ի մի յայտարարութիւնից միայն իմացանք, որ Ս. Էջմիածնի միաբաններից՝ կաթողիկ Հանդիսի գլխաւոր աշխատակից «Գերապ. Մեսրոպ վարդապետը» պատրաստում է այդ ցուցակը. Մեզ յայտնի է միայն, որ անցեալ տարի տասնեակ աշակերտներ նոյն վարդապետի ցուցմունքով մի քանի ձեռագրի նկարագրութեան սեւագրութիւններ են արել...

ՇՈՒՇԻ. Ս. Կ.—«Սոկրատի» տպագրութիւնը ընդհատուած էր, բայց այժմ նորից շարունակուում է:

ԹԻՖԼԻԶ. Ս Բ—Շատ ցաւալի կը լինէր եթէ մեր ուսուցիչները միմիայն դաս. մանկավարժական յօդուածներ կարդային, որոնց միտքն ըմբռնելու համար նրանք դժբախտաբար պատրաստութիւն անգամ չունին. Զարգացած մարդու համար բացի իւր մասնագիտութիւնից մի այլ աշխարհ եւս գոյութիւն ունի, որի մասին տեղեկութիւն ունենալը նրա պարտքն է. «Արարատի» թերութիւնները մենք ամենից աւելի գիտենք, սակայն ուրախ ենք, որ եռամսեայ հետամտութիւնից յետոյ խծբծասէրները միայն մանկավարժական բաժնի թերի լինելը գտան Ով ծանօթ է տպագրական գործին, նա գիտէ միայն թէ ինչ կը նշանակէ 2 թերթ ծաւալ ունեցող ամսագիրը յարմարացնել այնքան բազմադիմի պահանջներին: Սակայն յիշո՞ւմ էք արդեօք [illegible] օրինակ, որ այդ մարդիկ բացի իրենց խանութի ապրանքից մի այլ բան գովէին. Այդ է չարչիների սովորութիւնը: «Արարատի» էջերը կը կտրուին և կը կարդացուին, մանաւանդ հէնց չը հաւանողների ձեռքով. Այդ հոգսը մեզ թողէք: